ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ - Պատմություն առարկայի ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ԱՌԱՐԿԱ - Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ - Նոնա Միրաքյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ –Շուռնուխի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Գայանե Շալունց

ԳՈՐԻՍ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ----------3

2. Ծնողների ներգրավվածության նշանակությունը----------5

3. Ծնողական ժողովների կարևորությունը սովորողների կրթության ու դաստիարակության համատեքստում ----------9

4. Պատմության ուսուցչի ներգրավվածության նշանակությունը ----------12

5. Եզրակացություն ----------13

Օգտագործված գրականության ցանկ ----------14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ և պտուղներ: Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա»:

Վ. Ա. Սուխոմլինսկի

Ինչպես հայտնի է անհատականությունը ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքում և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը: Շատ հաճախ կարելի է կարծիք լսել, որ ամեն ինչ ընտանիքից է գալիս: Սա իսկապես այդպես է: Հիմնական բնավորության գծերը կա՛մ գենետիկորեն դրված են, կա՛մ ձևավորվում են ծնողների ազդեցության տակ մանկության տարիներին: Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում: Այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից, կարող են հավասարապես ծաղկել կամ բողբոջել դպրոցական միջավայրում՝ դասարանի թիմի ,ուսուցիչների և դասղեկի ազդեցության տակ: Այդ իսկ պատճառով պետք է իրականացնել համագործակցություն ուսուցչի , սովորողի ընտանիքի հետ: Եվ այդ համագործակցությունը գնալով դառնում է ավելի արդիական և պահանջված: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը: Ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի ՝ հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը: Հետևողական աշխատանքի արդյունքում բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կյանքի՝ մարտահրավերներով լի ժամամանակակից շրաջափուլում

սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող- ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որն ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա: Մեծաքանակ աշակերտներով դասարաններում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար բոպեներ տրամադրել այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը՝ անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից և այլնից... Այստեղ է , որ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և, գոնե, դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:

Հետազոտության նպատակը:

. Կապ ստեղծել դպրոցի և սովորողի ծնողի միջև :

.Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:

.Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:

.Ցույց տալ ծնող- ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

Հետազոտության խնդիրը:

. Ինչպե՞ս ներգրավել ծնողներին միջին և ավագ դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման պրոցեսին:

. Ինչպե՞ս ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.

- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.

- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.

- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.

- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.

- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը:

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

- Ավելի է հասկանում սեփական երեխային.

- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.

- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ երեխայի հանդեպ և ավելի շատ է գնահատում երեխայի ձեռքբերումները.

- Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.

- Ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.

- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.

- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այլևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և երեխայի կարիքների բավարարման համար.

- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնախնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ.

- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնախնդիրները լուծելու նպատակով:

Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

- Ուսուցչի մոտ հանդես է գալիս հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.
- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և արդյունքներից.

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը

ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.

- Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի.
- Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.
- Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.
- Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը ճատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացի մասին, քննարկում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր: Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են դպրոցին, օգնում որոշել երեխայի կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին: Ծնողական ժողովները կարող են կառուցվել տարբեր ձևերով: Շատ հաճախ ուսուցչի կամ ծնողի սխալ խոսելը, ոչ ճիշտ վարվելակերպը երեխաներին հետ է շպրտում և ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որն ավելի բարդացնում է ծնող-երեխա–մանկավարժ-դպրոց համագործակցությունը: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ ծնողական ժողովներ վարել, որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր սովորողը, վաղվա քաղաքացին: Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյալ սկզբունքներով՝

. Ժողովների ժամանակ որոշել մեկ առավել կարևոր խնդիր, որը վերաբերում է դասարանի աշակերտներին և դրա հիման վրա կազմակերպել զրույցը ծնողների հետ:

. Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել կենսափորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձի, ծնողական կոմիտեի անդամների և դպրոցի խորհրդի կարծիքների վրա:

Ծնողական ժողովների ժամանակ դասղեկը պետք է դրսևորի հետևյալ վարքագիծը.

. Հանել սեփական լարվածությունը և տագնապը ծնողներին հանդիպելուց առաջ:

. Խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցներով ցույց տալ հարգանք և ուշադրություն նրանց հանդեպ:

. Փորձել հասկանալ ծնողներին, ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց:

. Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել: Կարևոր է, որ բոլոր աշակերտների, այդ թվում /ռիսկային խմբի/ ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխա.

. Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա:

Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին , կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ:

Ընտանիքը, որպես դաստիարակության միջավայր, նրա ազդեցությունն անձի դաստիարակության գործընթացի և արդյունքների վրա շատ կարևոր են երեխայի բնականոն զարգացման համար:

Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը՝ հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի և դաստիարակության հնարավորությունը, ընտանիք վերադառնալու կամ ընտանիքի հետ ապրելու կարևորությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ազգային պատկանելության հարցը,

երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները, պահանջները և շահերը: Կարևոր հանգամանք է երեխայի կարգավիճակը ընտանիքում: Այս հարցը նույնպես պետք է դնել ընտանիք-դպրոց համագործակցության ակունքում: : Որպեսզի դաստիարակչական գործընթացն ընտանիքում անցնի արդյունավետ, հարկավոր է, ու ծնողներն առաջին հերթին բացառեն որևէ բռնություն, վատ կամ բացասական ներգործություն երեխայի վրա: Սա կարող է կազմաքանդել սովորողի բնականոն հոգեկան զարգացումն ու անդառնալի հետևանքներ ունենալ: Դաստիարակության գործում միշտ, այսօր առավելապես, կարևորվել է երեխայի նկատմամբ ծնողի ճիշտ դրսևորուները: Ծնողական սերն ու հոգատարությունը կենսական անհրաժեշտություն են երեխայի գոյապահպանման համար: Հակառակ դեպքում մի կողմից անտարբերությունն ու եսասիրությունը, մյուս կողմից ծնողական սիրո բացակայությունը հանգեցնում են ատելության, արհամարանքի՝ ծանրացնելով թե' երեխայի, թե' ծնողի կյանքը :

<< Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է, վատ դաստիարակությունը՝մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>:

Ա.Ս.Մակարենկո

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Պատմության իմացության հիմքերը դրվում են դպրոցում: Այդ իսկ պատճառով պատմության ուսուցչի ներգրավվածությունը աշակերտի դաստիարակության գործում մեծ դեր ունի: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են պատմության առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ աշակերտների մեջ հետաքրքրությունը և ծնողների ներգրավվածությունը մեծացնելու նպատակով պետք է կազմակերպվեն էքսկուրսիաներ, մրցույթներ և այլ միջոցառումներ: Նման միջոցառումները, որոնք կազմակերպվում են ծնողների ցանկությամբ և մասնակցությամբ, մեծացնում են սովորողների հետաքրքրվածությունը պատմություն առարկայի նկատմամբ, որոնց շնորհիվ սովորողների մեջ դաստիարակվում են արժեքներ, հմտություններ, կարողություններ, կարողունակություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պատմության ուսուցչի, սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է: Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է: Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա:

Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել, որպեսզի հնարավոր լինի մշտադիտարկել կրթական հնարավոր խնդիրները ու սովորողների՝ տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնել միասնական լուծման տարբերակներ:

Ուսուցիչն առանցքային դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցչին ներգրավելու առումով:Պատմության ուսուցիչը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայցուցիչը սովորողների կրթության ու դաստիարակության հարցում պետք է ունենան միասնական պահանջներ ու նպատակներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ.Դ. Ուշինսկի մանկավարժական հայացքները
2. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf
3. <<Ընտանիք և դպրոց>> գիտամեթոդական ամսագիր 3.2015
4. Մ. Մկրտչյան/Մանկավարժություն 2008 3-4
5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=119102 ՀՀ ընտանեկան օրենսգիրք: